ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ

«ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.11.2020թ.),

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի կողմից 13.11.2020թ. ներկայացված և 16.11.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/95 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.<u>«ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 13.11.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար «Կարճ հաղորդագրությունների sms ուղարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցում:

Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ բաժնով, սահմանվել է հետևյալ պահանջը. «Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է՝ 03.11.2020թ., ժամը 12:59:

Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել հրավերի վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից հաշված 13-րդ օրը ժամը 12:30-ը, այն է՝ 16.11.2020թ.:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րս մասի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ կարևոր փաստը.

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի Հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ բաժնով, սահմանվել է հետևյալ պահանջը. «Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Գտնում ենք, որ Հրավերի տեխնիկական բնութագրով մասնակցի համար սահմանված պահանջը ունենալու հենց ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ հանդիսանում է խտրական պահանջ, որի արդյունքում տվյալ Ընթացակարգի շրջանակներում չի ապահովվում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, ինչպես նաև վերոհիշյալ պահանջը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Տվյալ դեպքում, օրինակ, «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն չունի հենց ուղիղ պայմանագրեր բոլոր օպերատորների հետ, սակայն ուղիղ պայմանագրերի բացակայությունը չի զրկում ՍՊԸ-ին այդ ծառայությունը մատուցելու հնարավորությունից:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ սույն Ընթացակարգի հրավերով պահանջված ծառայությունը կարող են մատուցել բազմաթիվ ընկերություններ, սակայն Հրավերով սահմանված ուղիղ պայմանագիր ունենալու խտրական պահանջին բավարարում են ՀՀ-ում գործող միայն մի քանի ընկերություն:

Սույն բողոքը քննելիս՝ խնդրում ենք նկատի ունենալ, որ օրինակ, ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից հայտարարված «Կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայություններ» անվամբ ընթացակարգը (նույն ծառայությունների ձեռքբերումը) հայտարարվել է առանց նման խտրական պահանջի, վերոհիշյալ ընթացակարգին մասնակցել է նաև «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն և հաղթել, որից հետո 2020թ. հունվարի 23-ին կնքվել է Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը:

Գտնում ենք, որ վերոհիշյալ խտրական պահանջը հրավերով սահմանելով՝ «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ սույն ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 16.11.2020թ., ուստի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար «Կարճ հաղորդագրությունների sms ուղարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ընկերությունը ՀՀ ոստիկանության կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2020/95 բողոքի շրջանակներում ներկայացրած կարծիքի երաբերյալ հայտնել է հետևյալը.

««ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի 13.11.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/95 բողոքի վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է դիրքորոշում:

ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված դիրքորոշման, ինչպես նաև բողոքի քննությանը նվիրված նիստին հնչեցրած հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. *Ինչու՞ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն չունի ուղիղ պայմանագիր օպերատորների հետ:*

Հայաստանում բջջային կապի օպերատորների կողմից դրված է սահմանափակում՝ VAS օպերատորը պետք է ապահովի որոշակի ծավալի SMS տրաֆիկ՝ բջջային կապի օպերատորի հետ ուղիղ պայմանագիր կնքելու իրավունք ստանալու համար:

Իր գործունեության սկզբում «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն, որպես նորաստեղծ ընկերություն, չուներ ուղիղ պայմանագիր կնքելու հնարավորություն: Շեշտենք, որ ուղիղ պայմանագիր ունենալը պարտադիր չէ VAS օպերատոր աշխատելու համար: Այս հանգամանքը չի ազդում նաև SMS առաքման որակի, անվտանգության, տեղեկատվության գաղտնիության պահպանման կամ առաջարկվող գնի վրա (նայել կ.կ. 3, 5):

2.*Քանի՞ VAS ընկերություն ուղիղ պայմանագիր ունի օպերատորի հետ:*

Նման հստակ տեղեկատվություն մեր ընկերությունը ունենալ չի կարող, սակայն հաշվի առնելով նախորդ կետում նշված սահմանափակումը, ինչպես նաև Հայաստանի սահմանափակ շուկան, կասկածում ենք, որ բջջային կապի օպերատորի հետ ուղիղ պայմանագիր ունեցող VAS օպերատորների թիվը չափազանց փոքր է:

Այդ ինֆորմացիային կարող են տիրապետել միայն բջջային կապի օպերատորները:

3.*Չունենալով ուղիղ պայմանագիր օպերատորի հետ՝ հնարավոր չէ առաջարկել ցածր գին:*

Բջջային կապի օպերատորների հետ ուղիղ պայմանագիր չունենալը խոչընդոտ չէ մրցակցային գին առաջարկելուն: Մեր ընկերությունը հաշվի է առել այս հանգամանքը տվյալ մրցույթին մասնակցելու համար որոշում կայացնելիս և պատրաստ էր առաջարկել մրցակցային գին:

4.*Որտե՞ղ են գտնվում սերվերները:*

Բոլոր սերվերները գտնվում են Հայաստանում:

5.*Անվտանգության ապահովում:*

Հայաստանում բոլոր VAS օպերատորները պարտադրված են համապատասխանել անվտանգության միևնույն կանոններին, ուստի՝ SMS առաքման գործընթացում մի քանի օղակի առկայությունը որևէ կերպ չի անդրադառնում անվտանգության մակարդակի կամ տեղեկատվության գաղտնիության պահպանման վրա, ինչպես դա փորձում է համոզել Պատվիրատուն:

Նշենք, որ «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն աշխատում է https պրոտոկոլով, ինչպես և պահանջվում է տվյալ մրցույթի տեխնիկական բնութագրում՝ ապահովելով անհրաժեշտ

անվտանգությունը: Մենք համագործակցում ենք բանկերի, ՈՒՎԿ-ների, ինչպես նաև ՀՀ կառավարության հետ, ում համար անվտանգությունը և տեղեկատվության գաղտնիության պահպանումը առաջնային տեղում են: Մեր տևական համագործակցությունը խոսում է անվտագության և գաղտնիության պահպանման բարձր մակարդակի մասին:

Բացի այդ, ՀՀ ոստկանությունը չի հիմնավորել, թե ինչպես լրացուցիչ օղակը կարող է ազդել անվտանգության վրա և նվազեցնել այն, եթե այս ոլորտի բոլոր ընկերությունները աշխատում են համապատասխան հաստատված պրոտոկոլներով, որոնք լիովին ապահովում են բարձր մակարդակի անվտանգություն:

Վերոհիշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ է ՀՀ ոստիկանության կարիքների համար «Կարճ հաղորդագրությունների sms ուղարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և էականորեն սահմանափակում է մրցակցությունը:

Մրցակցության սահմանափակման վառ օրինակ է հանդիսանում այն փաստը, որ նշված ընթացակարգի մասնակցել են ընդամենը երկու ընկերություն»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.11.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացվածը:

<u>2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Հայաստանի Հանրապետությունում գործող բջջային կապի օպերատորները կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների մատուցման համար պայմանագրեր է կնքում առևտրային կազմակերպությունների հետ, որոնք համաձայն կնքված պայմանագրի կարճ հաղորդագրություններ են գնում բջջային օպերատորներից և այն վերավաճառում ՀՀ շուկայում: Կարճ հաղորդագրությունների ծառայություն մատոցող կազմակերպությունները ՀՀ գործող բջջային օպերատորների կողմից

անվանվում են «ՎԱՍ» ծառայություններ մատուցող ընկերություններ: ՀՀ բջջային օպերատորները բոլոր ՎԱՍ ծառայություն մատուցող ընկերությունների համար սահմանում են կարճ հաղորդագրությունների ձեռք բերման միևնույն սակագին: Քանի որ բոլոր ՎԱՍ օպերատորների համար բջջային օպերատորների կողմից սահմանվում է միևնույն սակագինը, միջնորդավորված ծառայություններ մատուցող ընկերությունները շահույթ ակնկալելով չեն կորող սահմանել նվազագույն սակագին, ինչպես ՎԱՍ օպերատորները: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է թվով մինչև 10 (տասը) ՎԱՍ ծառայություն մատուցող ընկերություն, որոնք ՀՀ բջջային օպերատորների հետ նմանատիպ կարճ հաղորդագրությունների ուղարկման պայմանագրեր ունեն կնքված:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետով սահմավում է, որ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

ՀՀ ՈՍ ճանապարհային ոստիկանության պատասխանատու ստորաբաժանման կողմից ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման համար մշակվել է նմանատիպ տեխնիկական նկարագիր, քանի որ ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման արդյունքում ՀՀ ՈՍ ձեռք է բերելու ծառայություններ, որի կարճ հաղորդագրությունների միջոցով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը պետք է ուղարկվեն մեկանգամյա ծածկագրեր, որը հնարավորություն է ստեղծում մուտք գործել ՀՀ ՈՍ ՃՈ համակարգ, տեսնել մի շարք տեղեկատվություն և իրականացնել գործարքներ: Տեղեկատվությունը, որը հասանելի է դառնում համակարգ մուտք գործելիս, պարունակում է անձնական տվյալներ, ռազմական գաղտնիք պարունակող տվյալներ, ինչպես նաև հնարավոր է կցել շահագործող վարորդ իրավախատումների համար և նույնիսկ սկսել տրանսպորտային միջոցի օտարման գործընթաց: Նման ֆունկցիոնալ գործառույթների համար պետք է պահպանել անվտանգության շատ բարձր մակարդակ, որը պետք է համապատասխանի ՀՀ իրավապահ մարմինների կողմից սահմանված պահանջներին: ՀՀ գործող բջջային օպերատորների հետ ուղիղ պայմանագրերի բացակայության դեպքում ծառայություն մատուցող ընկերությունը պետք է օգտվի այլ ՎԱՍ ընկերության սարքավորումածրագրային հարթակներից, որը ստեղծում է ևս մեկ հավելյալ օղակ

նմանատիպ տեղեկատվության հնարավոր տիրապետման համար: Անվտանգության նկատառումներից ելնելով յուրաքանչյուր հավելյալ օղակը նվազեցնում է տեղեկատվության անվտանգության և վերահսկողության մակարդակը, որը անընդունելի է, և պարունակում են մեծ ռիսկեր՝ իրենց հետևանքներով:

Հաշվի առնելով վերոգրյալը և «Սպրինտ Ուեյս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիտարկումները, հայտնում եմ, որ ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման տեխնիկական բնութագիրը կազմված է ճիշտ՝ հաշվի առնելով ՀՀ ՈՍ կարիքները և անվտանգության ապահանջները, իսկ «Սպրինտ Ուեյս» ՍՊ ընկերության ներկայացրած պնդումը, որ տեխնիկական բնութագիրը գրվել է ինչ-որ կազմակերպության պահանջներին համապատասխան չի համապատասխանում իրականությանը, քանի որ ներկայումս առկա են թվով մինչև 10 կազմակերպություն, որոնք ՀՀ գործող բջջային օպերատորների հետ ունեն կնքած ուղիղ պայմանագրեր»:

Ի պատասխան «Սպրինտ Ուեյ» ՍՊ ընկերության կողմից 02.12.2020 թվականին ներկայացրած դիրքորոշման՝ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ գործող բջջային օպերատորները ուղիղ պայմանագրեր են կնքում ՎԱՍ օպերատորների հետ կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների մատուցման համար հաշվի առնելով տվյալ կազմակերպության առանձնահատկությունները՝ առաքվող կարճ հաղորդագրությունների քանակ, սարքավորումածրագրային համակարգեր, անվտանգության մակարդակ: Եթե «Սպրինտ Ուեյ» ՍՊ ընկերությանը չի հաջողվում ուղիղ պայմանագիր կնքել ՀՀ գործող բջջային օպերատորների հետ, ապա դա վկայում է, որ նշված ընկերությունը չի համապատասխանում ՀՀ գործող բջջային օպերատորների կողմից ներկայացծրած պահանջներին:

ՀՀ գործող բջջային օպերատորները ուղիղ պայմանագրեր են կնքել, ըստ մեր ունեցած տեղեկություններով, մոտ տասը այլ ընկերությունների հետ, որոնք մատուցում են կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայություն և հանդիսանում են ՎԱՍ օպերատոր, և որոնք բավարարում են ՀՀ բջջային օպերատորների կողմից ներկայացրած պահանջներին:

ՀՀ գործող բջջային կապի օպերատորները բոլոր ՎԱՍ օպերատորների համար սահմանում են միևնույն ձեռքբերման գին կարճ հաղորդագրությունների ուղարկման համար: Սա նշանակում է, որ ցանկացած այլ կազմակերպություն, որը չունի ուղիղ

պայմանագիր չի կարող շուկայում առաջարկել ավելի շահավետ գին քան ՎԱՍ օպերատոր հանդիսացող ընկերությունը, քանի որ յուրաքանչյուր ՎԱՍ օպերատոր հանդիսանում է շահույթ հետապնդող կազմակերպություն, որը «Սպրինտ Ուեյ» ՍՊ ընկերությանը վերավաճառելու արդյուքնում պետք է շահույթ հետապնդի:

Նշված հրավերի տեխնիկական բնութագիրը չի խոչընդոտում նշված 10 ՎԱՍ օպերատորների մասնակցությունը նշված հրավերին, միաժամանակ՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կոտով սահմավում է, որ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

ՎԱՍ օպերատոր չհանդիսացող ընկերությունը չի կարող երաշխավորել, որ հաղորդագրությունները ուղարկվելու են սեփականության իրավունքով իրեն պատկանող սերվերների միջոցով, քանի որ նա օգտվելու է ուղիղ պայմանագրեր ունեցող ՎԱՍ օպերատորի սերվերներից, ինչպես նաև չի կարող երաշխավորել տվյալ սերվերների, ծրագրային համակարգի և փոխանցվող տվյալների անմիջական անվտանգությունը, քանի որ նշված համակարգերը սպասարկվում են ՎԱՍ օպերատոր հանդիսացող ընկերության կողմից, որը չունի ոչ մի պարտավորություն «Սպրինտ Ուեյ» Ընկերության կողմից կնքված պայմանագրերի մասով:

ՀՀ Ոստիկանությունը չի կարող հիմնվել անկեղծ խոսքի վրա, որ անվտանգությունը երրորդ ընկերության կողմից կպահպանվի՝ հաշվի առնելով այն փաստը, որ այդ երրորդ ընկերությունը չունի ոչ մի պայմանագրային պարտավորություն ՀՀ Ոստիկանության հետ: «Սպրինտ Ուեյ» ՍՊ ընկերության կողմից նշված https պրատակոլը իրենից ենթադրում են գաղտնագրված տվյալների փոխանցում կարճ հաղորդագրություն ուղարկողի և ՎԱՍ օպերատորի միջև: Նշված պրատակոլը չի կարող ապահովել տվյալների անվտանգությունը ՎԱՍ օպերատորի սերվերային, ցանցային կամ ծրագրային համակարգում, ինչպես նաև այն չի ենթադրում ՎԱՍ օպերատորի և ՀՀ բջջային օպերատորների միջև անվտանգ տվյալների փոխանակումը:

Եթե օրինակ «Սպրինտ Ուեյ» ՍՊ ընկերությունը 2020 թվականի ընթացքում մատուցել է կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայություն ՀՀ կառավարությանը, փաստ է, որ 2021 թվականի համար հայտարարված մրցույթում ՀՀ Կառավարության կողմից հրավերում փոխվել է տեխնիկական բնութագիրը, և նախատեսվել է նոր պահանջ, որ

ծառայություն մատուցող ընկերությունը պետք է ունենա ուղիղ կնքված պայմանգրեր ՀՀ գործող բջջային օպերատորների հետ: Նշված հրավերը արդեն ուղարկվել է Ձեզ: Այս փաստը վկայում է և կարելի է ենթադրել , որ ՀՀ Կառավարությունը կամ 2020 թվականին մատուցվող ծառայություններում նկատել է անվտանգության ապահովման խնդիր, կամ 2021 թվականի համար ուժեղացրել է անվտանգության պահանջը՝ հաշվի առնելով երկրում առկա իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Ոստիկանության կողմից հայտարարված հրավերով մրցույթի տեխնիկական բնութագիրը բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից և միաժանակ ապահովում է անվտանգության բարձր մակարդակ, իսկ բողոք ներկայացրած ընկերության փաստարկները անհիմն են, որի մասին վկայում է այն հայտարարությունը, որ ՀՀ Կառավարությունը նշված պահանջը չի կիրառում իր կողմից հայտարարած մրցույթի տեխնիկական բնութագրում:

Խնդրում եմ Ձեզ մերժել «Սպրինտ Ուեյ» ՍՊ ընկերության ներկայացրած բողոքը, քանի որ ըստ վերոգրյալի այն անհիմն է և չի բխում Հայաստանի Հանրապետության շահերից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.11.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ ոստիկանության կարիքների համար կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ բաժնով, սահմանվել է հետևյալ պահանջը. «Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական

փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ բողոքի լրացմամբ և կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2020/95 բողոքի շրջանակներում ՀՀ ոստիկանության դիրքորոշումները՝ կից փաստաթղթերով, «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) ***պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.***

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ ***գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:***

Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության կարիքների համար կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ բաժնով, սահմանվել է հետևյալ պահանջը. «Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ»:

Այսպիսով՝ «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն բողոքով պնդել է, որ Հրավերի տեխնիկական բնութագրով մասնակցի համար սահմանված պահանջը՝ ունենալու հենց ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, հանդիսանում է խտրական պահանջ, որի արդյունքում տվյալ Ընթացակարգի շրջանակներում չեն

ապահովվում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, ինչպես նաև վերոհիշյալ պահանջը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն չունի հենց ուղիղ պայմանագրեր բոլոր օպերատորների հետ, սակայն ուղիղ պայմանագրերի բացակայությունը չի զրկում ՍՊԸ-ին այդ ծառայությունը մատուցելու հնարավորությունից:

Ի պատասխան Ընկերության պնդմանը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ՈՍ ճանապարհային ոստիկանության պատասխանատու ստորաբաժանման կողմից ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման համար մշակվել է նմանատիպ տեխնիկական նկարագիր, քանի որ ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման արդյունքում ՀՀ ՈՍ ձեռք է բերելու ծառայություններ, որի կարճ հաղորդագրությունների միջոցով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը պետք է ուղարկվեն մեկանգամյա ծածկագրեր, որը հնարավորություն է ստեղծում մուտք գործել ՀՀ ՈՍ ՃՈ համակարգ, տեսնել մի շարք տեղեկատվություն և իրականացնել գործարքներ: Տեղեկատվությունը, որը հասանելի է դառնում համակարգ մուտք գործելիս, պարունակում է անձնական տվյալներ, ռազմական գաղտնիք պարունակող տվյալներ, ինչպես նաև հնարավոր է կցել շահագործող վարորդ իրավախատումների համար և նույնիսկ սկսել տրանսպորտային միջոցի օտարման գործընթաց: Նման ֆունկցիոնալ գործառույթների համար պետք է պահպանել անվտանգության շատ բարձր մակարդակ, որը պետք է համապատասխանի ՀՀ իրավապահ մարմինների կողմից սահմանված պահանջներին: ՀՀ գործող բջջային օպերատորների հետ ուղիղ պայմանագրերի բացակայության դեպքում ծառայություն մատուցող ընկերությունը պետք է օգտվի այլ ՎԱՍ ընկերության սարքավորումածրագրային հարթակներից, որը ստեղծում է ևս մեկ հավելյալ օղակ նմանատիպ տեղեկատվության հնարավոր տիրապետման համար: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ յուրաքանչյուր հավելյալ օղակը նվազեցնում է տեղեկատվության անվտանգության և վերահսկողության մակարդակը, որը անընդունելի է և պարունակում է մեծ ռիսկեր՝ իրենց հետևանքներով:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Միևնույն ժամանակ նույն հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) ***<u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ</u>***.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Ուսումնասիրելով ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված վեճի առարկա հանդիսացող պահանջը, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության կողմից բողոքով հայտնած այն տեղեկատվությունը, համաձայն որի, վերջինս չունի հրավերի վիճարկվող պահանջին համապատասխան SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, այնուամենայնիվ, գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջը՝ ունենալ SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ այն համապատասխանում է Պատվիրատուի կարիքին և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սկզբունքներին:

Ընդ որում՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովի պատվիրատուի այն

կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի Օրենքի 13-րդ հոդվածների պահանջներին:

Այսպիսով՝ նշված պահանջը Պատվիրատուի կողմից նախատեսվել է ըստ վերջինիս կարիքի և որևէ կերպ չի խոչընդոտում մասնակիցների՝ տվյալ գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացմանը և չի հանդիսանում խտրական պահանջ:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Ընթացակարգի հրավերով պահանջված ծառայությունը կարող են մատուցել բազմաթիվ ընկերություններ, սակայն Հրավերով սահմանված ուղիղ պայմանագիր ունենալու խտրական պահանջին բավարարում են ՀՀ-ում գործող միայն մի քանի ընկերություն, ապա այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ ***գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝*** բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով՝ վերը նշված կարգավորումը հստակ սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել Կարգի 22-րդ կետի խախտման փաստը, հայտնելով, որ Ընկերությունը չունի հստակ տեղեկատվություն ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ունեցող ընկերությունների վերաբերյալ, սակայն հաշվի առնելով նշված սահմանափակումը, ինչպես նաև Հայաստանի սահմանափակ շուկան, կասկածում է, որ նման ընկերությունների թիվը չափազանց փոքր է:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ ՀՀ վարչապետի աշխատակազի կողմից հայտարարված «Կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայություններ» անվամբ ընթացակարգը (նույն ծառայությունների ձեռքբերումը) հայտարարվել է առանց նման խտրական պահանջի, ապա սույն մասով արձանագրում

եմ, որ դեռևս նմանատիպ ծառայության ձեռքբերումն ինքնին չի ենթադրում միևնույն կարիքի բավարարում, միևնույն խնդիրների իրականացում, հետևաբար գտնում եմ, որ նման դիտարկումն անհիմն է, քանի որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել տվյալ Պատվիրատուի կարիքի բավարարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2021/ՃՈ ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված Ընկերության կողմից վիճարկվող պահանջը խտրական չի կարող դիտարկվել, քանի որ այն չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման գործընթացի կազմակերպման սկզբունքներին, ինչպես նաև թույլ չեն տրվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտումներ, միաժամանակ բխում է Պատվիրատուի կարիքից: Ուստի գտնում եմ, որ «ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՍՊՐԻՆՏ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի կողմից 13.11.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**